



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Երևան, Ալեք Սանուկյան 5
հեռ/ ֆաքս 578 502
№ 09-032

«24» սեպտեմբեր 2010թ.

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հակոբյան,

Ի պատասխան Ձեր 17.09.10 թվականի թիվ 01/09.1.2022-10 գրության հայտնում ենք, որ Ձեր կողմից բարձրացված՝ Հանրային հեռուստառադիոընկերության կողմից ծրագիր մշակելու Սփյուռքի հայկական հեռուստաժամերին և ռադիոժամերին համակարգված օգնություն ցուցաբերելու հարցը իսկապես խիստ արդիական և կարևոր խնդիր է: Հանրային հեռուստառադիոընկերությունը կարևորում է Սփյուռքում գործող նմանատիպ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից իրականացվող հայապահպանության գործունեությունը:

Քանի որ Սփյուռքում գործող նմանատիպ հեռուստաընկերությունները և ռադիոընկերությունները բազմաթիվ են, ուստիև հայտնում ենք մեր պատրաստակամությունը հայկական բովանդակությամբ հեռուստատեսային և ռադիո հաղորդումներ, ֆիլմեր, հոլովակներ, ինչպես նաև այլ նյութեր տրամադրել Սփյուռքում գործող այն հեռուստաընկերություններին և ռադիոընկերություններին, որոնք կդիմեն մեզ այդ խնդրանքով:

Կանխավ շնորհակալություն:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐՏՈՒՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Մոֆթ թիվ 2469-10
«27» 09 2010թ.